«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Բարոյական արժեքներ

Առարկան՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Անահիտ Պետրոսյան

Ուսումնական հաստատություն՝ Արագյուղի << Տիգրանակերտ կրթարան>> միջնակարգ դպրոց

Երևան 2023

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**1.** Ներածություն---------- 3-4

**2.** Բարոյականություն ----------5-6

**3.** Արժեք---------- 6-8

**4.** Բարոյական արժեքներ և ոչ բարոյական վարքագիծ---------- 9-10

**5.** Բարին ու չարը---------- 10-11

**6.** Պարտք և խիղճ---------- 12-14

**7.** Տասը պատվիրանները---------- 15-16

**8.** Աստվածաշնչյան առակներ----------16-19

- Երկու սերմի պատմությունը
- Առակ բարի սամարացու մասին

**9.**Եզրակացություն ---------- 20-21

**10.**Գրականության ցանկ ---------- 22

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## Հետազոտության թեմայի արդիականությունը

Զարգացած անհատի համար,անշուշտ, կարևոր է համամարդկային արժեքների ճանաչումը, սակայն դա հնարավոր է իրականացնել սեփական ազգային արժեքները ճանաչելու և հարգելու ճանապարհով, այդ իսկ պատճառով Հայաստանում հանրակրթությունն իրականացվում է ազգայինի հենքի վրա՝ համամարդկային արժեքների ներդաշնակ զուգորդմամբ: Եվ այս առումով դպրոցում չափազանց մեծ է բարոյական դաստիարակության դերը: Բարոյական արժեքները սկզբունքներ են, որոնք առաջնորդում են մարդու վարքը և ծառայում են որպես ուղեցույց հասարակության զարգացման գործում:Բարոյական արժեքների փոխանցումը սերնդեսերունդ նպաստում է հասարակության անդամների ներդաշնակ համակեցությանը ու փոխադարձ հարգանքի ձևավորմանը:Մարդկային արժեքները սերնդեսերունդ փոխանցվում են կրթության և դաստիարակության միջոցով : Երեխաների մոտ բարոյական արժեքները ձևավորվում են թե դպրոցում , թե տանը, թե շրջապատում:

## Հետազոտության նպատակը

1. Օգնել ձևավորել բնավորության դրական գծեր. կարեկցանք, հարգանք, բարություն, խոնարհություն և այլն:
2. Օգնել երեխաներին տարբերակել ճիշտը սխալից, լավից և վատից: Ի վերջո, սա նպաստում է ռացիոնալ մտածողության և շրջապատող աշխարհի վերաբերյալ օբյեկտիվ դատողության զարգացմանը:
3. Ձևավորել երեխայի տեսակետը կյանքի տարբեր կողմերի վերաբերյալ, ստեղծել վերաբերմունքի և համոզմունքների համակարգ:

4. Բարձրացնել երեխայի ինքնավստահությունը և օգնել նրան լավատես մնալ նույնիսկ դժվարին իրավիճակներում:
5. Օգնել երեխային խուսափել հասարակության բացասական ազդեցությունից:
6. Նպաստել երեխաների մոտ սոցիալական կյանքի բարձր չափանիշների հաստատմանը:

## Հետազոտության խնդիրը

Բարոյական արժեքների միջոցով երեխաների մոտ զարգացնել կյանքում ապրելու, հասարակության մեջ բոլոր իրավիճակներում կողմնորոշվելու ,դրսևորվելու և որոշումներ կայացնելու կարողությունների զարգացմանը:

# 1. Բարոյականություն

<<Բարոյականություն >> հասկացությունը ծագել է հունարեն ethos բառից , որը նշանակում է ավանդույթ , բնավորություն: Այն առաջին անգամ օգտագործել է հույն հայտնի փիլիսոփա Արիստոտելը: Ըստ Արիստոտելի ՝ բարոյականությունն ուսումնասիրող գիտությունը ՝ բարոյագիտությունը /էթիկա/ , փորձում է պատասխանել << Ի՞նչ պետք է անենք >> հարցին:Այդ պատճառով Արիստոտելը բարոյագիտությունը համարում էր գործնական փիլիսոփայություն: Բարոյագիտության հիմնական հասկացությունները <<բարին>> ու <<չարը>>, <<լավն >> ու <<վատն >> են: Բարոյականությունը ամեն ինչ գնահատում է բարու և լավի տեսանկյունից, այն մարդկանց սովորեցնում է գնահատել իրավիճակները, կատարել ընտրություն ու գործել բարու և լավի հիման վրա: Բարոյականությունը սկսվում է այն պահից , երբ մարդը հոգ է տանում այլ մարդու մասին:Այլ մարդկանց հանդեպ վերաբերմունքը բարոյականության հիմքերից է :Դրա վկայությունն է բարոյականության ոսկե կանոնը .<<Վարվիր ուրիշի հետ այնպես , ինչպես կուզեիր, որ քեզ հետ վարվեին>>: Աստվածաշնչում այդ կանոնը ձևակերպված է հետևյալ կերպ .

**<<Այն ամենը , ինչ որ կամենում եք , որ մարդիկ ձեզ անեն, այդպես և դուք արեք նրանց>>:**

Ոսկե կանոնի առանցքը փոխադարձությունն է :Մարդը չի ցանկանում ինքն իրեն վնասել , նա ձգտում է , որ իրեն սիրեն, հարգեն, անհրաժեշտության դեպքում աջակցեն :Իսկ եթե նա ցանկանում է ստանալ այդ ամենը մյուսներից , ապա ինքն էլ մյուսների նկատմամբ պետք է նման վարքագիծ դրսևորի :

Նա պետք է ձգտի բարիք գործելու այլ մարդկանց նկատմամբ ՝ իր ընկերների , ընտանիքի անդամների , բարեկամների , հայրենակիցների և նույնիսկ օտարների , որպեսզի այդ բարիքը վերադառնա իրեն:

Բարոյական վարքագիծը պահանջում է ոչ միայն բարիք գործել՝ սպասելով, որ դիմացինը նույն բարիքը քո նկատմամբ կգործի, այլև բարիք գործել՝ առանց սպասելու փոխադարձ բարիքի

Բարոյագիտության մեջ տարբերակում ենք երեք հիմանարար արժեքներ.

1. **Բարոյական** նշանակում է բարի, լավ:

2. **Անբարոյական** նշանակում է չար, վատ:

3. **Ոչ բարոյական** նշանակում է բարոյական հարթությունից դուրս:

# 2. Արժեք

«Արժեք» բառի սկզբնաղբյուր է համարվում ֆրանսերեն «valoir» բառը, որը մեկնաբանվում է որպես «արժանի լինել»: Եթե որևէ երևույթ կարևոր է, նշանակալի է, օգտակար է, ապա այն արժեք է: Բառարաններում ևս հանդիպում ենք «արժեք» բառի նման մեկնաբանություն: Եվ այդ արժեքը կողմնորոշիչ, ուղեցուցային դեր է ունենում մարդու բոլոր տեսակի գործողություններում: Արժեքներն իրենց հերթին ձևավորում են «արժեհամակարգ», մի եզրույթ, որը փիլիսոփայության մեջ մեկնաբանվում է որպես ամբողջություն այն արժեքների, որն անհատը գնահատում է իր շրջապատում: Արժեքների տարբեր դասակարգումներ կան, Ն. Ս. Ռոզովն, օրինակ, կատարել է հետևյալ դասակարգումը.

1. մարդասիրական արժեքներ՝ մարդու իրավունքներ և արժանապատվություն:

2. Սոցիալական արժեքներ՝ առանձին մարդկանց և խմբերի փոխադարձ գործունեություն քաղաքական, տնտեսական, իրավական ոլորտում:

3. Մշակութային արժեքներ՝ արվեստ, կրոն, բարոյականություն, ազգային և էթնիկ ավանդույթներ:

**4.**Էկոլոգիական արժեքներ՝ շրջապատող բնություն, շրջակա միջավայր:

Մարդկության զարգացման տարբեր փուլերում տարբեր պատկերացումներ ու մեկնաբանություններ են եղել «արժեք» եզրույթի մասին: Ուշագրավ են նախորդ դարում փիլիսոփայության՝ արժեքների բնույթն ուսումնասիրող «ակսիոլոգիա»՝ «արժեքաբանություն» (հունարեն՝ արժեք և բան, խոսք, բառացի՝ ուսմունք արժեքների մասին) անունը կրող ուսմունքի ձեռքբերումները: Այս ուսմունքն ուսումնասիրում է արժեքների բնույթը, ամբողջական արժեքային համակարգը, տարբեր արժեքների հարաբերակցությունը:

«Արժեք» հասկացության հետևյալ մեկնությունն է տալիս Կ. Քլաքհոնը. «Հասկացություն՝ բացահայտ կամ թաքնված, որը տարբերակում է անհատին կամ բնութագրական է խմբի համար, որն ընտրության ազդեցություն է կրում հասանելի եղանակներից, իմաստներից և գործողություններից»: Արժեքների ուսումնասիրության բնագավառում ուրույն հետազոտություն է կատարել Շ. Շվարցը: Ըստ հեղինակի, երբ մարդ մտածում է արժեքների մասին, առաջին հերթին առանձնացնում է, թե որ արժեքներն են առավել կարևոր իր համար կյանքում: Որոշակի կոնկրետ արժեք կարող է կարևոր լինել մեկի համար, բայց բացարձակ անկարևոր մյուսի համար: Արժեքների տեսություններում կարևորվում է այն հայեցակարգը, որտեղ առանձնացվում են արժեքների ներքոնշյալ հինգ հատկանիշները.

✓ Արժեքները համոզմունքներ են: Մարդիկ, որոնց համար անկախությունը կարևոր արժեք է, «սթափվում» են , երբ նրանց անկախությունը վտանգվում է, հուսահատվում են, երբ անկարող են լինում այն պաշտպանելու, և վերջապես երջանիկ են, երբ կարող են վայելել այն

✓ Արժեքները կապված են ցանկալի նպատակների հետ, որոնք մոտիվացնում են մարդուն կատարելու որոշակի գործողություններ: Մարդիկ, որոնց համար հասարակական կարգը, արդարությունը կարևոր արժեքներ են, մոտիվացված են հետապնդել այդ նպատակները:

✓ Արժեքները լայն և ընդգրկուն հասկացություններ են: Այս հատկանիշը տարբերակում է արժեքներն ավելի նեղ հասկացություններից, ինչպիսիք են նորմերը և մոտեցումները, որոնք սովորաբար վերաբերում են կոնկրետ գործողությունների, օբյեկտների կամ իրավիճակների:

✓ Արժեքները ծառայում են որպես սկզբունքներ կամ չափանիշներ: Արժեքներն ուղղորդում են մարդկանց որոշակի գործողությունների: Մարդիկ որոշում են, թե ինչն է լավ, ինչը՝ վատ, արդարացնում կամ մեղավոր են ճանաչում, գործում կամ խուսափում են՝ հենվելով իրենց համար թանկ արժեքների հնարավոր հաջորդականության վրա:

✓ Մարդու գործողություններն ուղղորդվում են բազմաթիվ արժեքներով: Ցանկացած վարքագծի կամ վերաբերմունքի վրա ազդում են ոչ թե մեկ, այլ բազմաթիվ արժեքներ:



# 3. Բարոյական և ոչ բարոյական արժեքներ

Երբ մարդիկ խոսում են արժեքների մասին , շատ հաճախ նկատի են ունենում բարոյական արժեքները , որոնք վերաբերում են մարդկանց ճիշտ կամ սխալ , բարի կամ չար լինելուն։Կան շատ արժեքներ, որոնք առնչություն չունեն բարոյականության հետ ։Եթե արժեքները տարբերակելիս շփոթություն առաջանա , ապա բարոյական արժեքները զանազանելու համար հարցրեք. <<Արդյո՞ք այս արժեքը բարու կամ ճիշտ վարքագծի մասին է ։Այդ արժեքները կրող մարդն ավելի լա՞վն է , քան դրանք չունեցողը>>։

Օրինակ 1

Արմենն ունի **ատլետիկ** կազմվածք և ընդգրկված է բասկետբոլի թիմում ։Նա ինձ շատ դուր է գալիս , քանի որ թիմային խաղացող է ։Նա իրեն ցուցադրելու համար երբեք չի տարվում անհատական խաղով ։ **Հոգատար** է թիմի բոլոր անդամների նկատմամբ ։

Այս օրինակում <<ատլետիկ >> արժեքը բարոյական չէ , քանի որ ատլետիկ կազմվածք ունեցող մարդն ավելի լավը կամ բարի չէ ոչ ատլետիկ կազմվածք ունեցող մարդուց։ Փոխարենը <<հոգատար>> արժեքը բարոյական է , քանի որ հոգատար մարդն ավելի լավ մարդ է։

Օրինակ 2

Աննան **ստեղծագործ** միտք ունեցող մարդ է ։Հավանաբար մի օր նա նկարիչ կդառնա ։ Նա ինձ օգնում է , երբ դասերի ժամանակ խմբային աշխատանքներ ենք կատարում ։Նա **համագործակցող** աշակերտ է և կարողանում է աշխատել բոլորի հետ ։Ես երբեք չեմ զգացել , որ նա մարդկանց ուզենա ցույց տալ , թե շատ խելացի է ։

<<Ստեղծագործ>> արժեքը բարոյական չէ , իսկ << համագործակցող >> արժեքը բարոյական արժեք է։

Ոչ բարոյական է համարվում հասարակության կողմից ընդունված բարոյական նորմերին չհամապատասխանեցված վարքը ։Օրինակ ՝գողություն կատարողին կարող են համարել անբարո մարդ , որովհետև գողությունը անհամատեղելի է մարդկության կողմից ընդունված բարոյական արժեքների հետ։

Կարևոր է անդրադառնալ ևս մեկ հանգամանքի ։Բարոյականը և քաղաքավարին նույնը չեն ։ Օրինակ ՝ քաղաքավարի կարելի է համարել զրուցակցի անհետաքրքիր պատմությունը համբերատար լսելը , հասարակական վայրում անտեղի չաղմկելը, <<Դուք>> - ով դիմելը և այլն ։Հասարակության այս չգրված կանոնները խախտողն անքաղաքավարի է , այլ ոչ թե անբարոյական։

# 4. ԲԱՐԻՆ ՈՒ ՉԱՐԸ

**Բարի է այն , ինչը նպաստում է կյանքի պահպանմանը և զարգացմանը , չարն այն է , ինչը ոչնչացնում է կյանքը։**

**Ա. Շվեյցեր**

<<Բարի >> բառն այնքան կարևոր է մարդու կյանքում , որ բնութագրում է ոչ միայն մարդուն և նրա արարքները , այլև ավելի լայն իմաստով է օգտագործվում։Օրինակ ՝ հայերենում մենք օգտագործում ենք <<բարի առավոտ >>, <<բարի ճանանապարհ>> արտահայտությունները ։Այսինքն ՝ բարին ընկալվում է նաև որպես տրամադրություն, միջավայր, մաղթանք։

Այն ամենը , ինչը հակադիր է բարուն , չար է ։ <<Չար>> բառը նույնացվում է հակամարդկայինի, բռնության , խաբեության հետ։Բարի մարդը բարոյապես առողջ է , չար մարդը ՝ բարոյապես հիվանդ ։Ֆրանսիացի փիլիսոփա Բլեզ Պասկալի կարծիքով ՝ **որքան մարդը բարի է , այնքան ավելի շատ է ուրիշների մեջ բարություն տեսնում։**

Բարոյագիտության մեջ երկար ժամանակ քննարկվել է հետևյալ հարցը . մարդն ի բնե բարի՞ է , թե՞ չար։Ոմանք կարծում են , որ մարդն ի բնե բարի է , մյուսների համոզմամբ ՝ մարդն ի բնե չար է , երրորդները կարծում են , որ մարդը ոչ բարի է , ոչ էլ չար։Օրինակ ՝ գերմանացի փիլիսոփա Ֆ. Նիցշեն մարդուն համարում էր չար էակ։ Ֆրանսիացի փիլիսոփա Ժան-Ժակ Ռուսոն կարծում էր , որ մարդն ի բնե բարի է ։ Նրան չար է դարձնում հասարակությունը։Կանտը կարծում էր , որ մարդն ի բնե չար է ։Մարդը հակված է չարիք գործելու։Բայց մարդու մեջ կան նաև բարու հատիկներ ։ Բարոյական դաստիարակության հիմնական նպատակը բարու հատիկները զարգացնելն է , որպեսզի դրանք գերիշխեն չարիք գործելու մարդու բնական հակվածության նկատմամբ։

Շատ բարոյագետներ այն կարծիքին են , որ անհնար է արմատախիլ անել չարը։ <<Բարին գոյություն ունի այնքանով , որքանով գոյություն ունի չարը >> , - ասում են նրանք։ Հայտնի փիլիսոփա Օգոստինոս Երանելին ասում էր .<<Բարին ավելի դուրեկան և գովելի է դառնում, եթե հնարավոր է լինում համեմատել չարի հետ>>։ Չարը համարվում է կյանքի անհրաժեշտ տարրերից մեկը ։Այն , ինչ մենք կոչում ենք չար , բարու հակառակն է։ Առանց չարի չկան նաև բարին։

Շատ կարևոր է բարին տարբերել օգտակարից ։Երբ մենք խոսում ենք օգտակարի մասին , ապա անմիջապես հարց է առաջանում ՝ ո՞ւմ համար։Մինչդեռ բարին բոլորի համար է ։Թեև առօրեական իմաստով հաճախ բարին ու չարն էլ են դիտարկվում նեղ խմբային իմաստով ։Օրինակ ՝ պատերազմում կողմերից մեկն իր հաղթանակը կարող է դիտել , որպես բարու հաղթանակ , իսկ մյուս կողմը ՝ չարի հաղթանակ։

# 5.ՊԱՐՏՔ ԵՎ ԽԻՂՃ

Բարոյական արժեքները կողմնորոշում են մարդուն իր գործողություններում։ Բարոյական արժեքներին հետևելը մարդու պարտքն է ։ Պարտքի չկատարումն ընկալվում է որպես մեղք և տանջում մարդու խիղճը ։Բարոյական արժեքները պարտադիր են կատարման համար։ Դրանցով պետք է առաջնորդվել ոչ միայն մտերիմ մարդկանց հետ հարաբերություններում , այլև բոլոր մարդկանց հետ ։ Պարտքը բարոյական արժեքների հիմնական հասկացություններից է։ Պարտքը սահմանվում է որպես պարտականությունները և պարտավորությունները կատարելու անհրաժեշտություն։Անհրաժեշտ է տարբերակել <<պարտք>> , <<պարտականություն>> և <<պարտավորություն>> հասկացությունները։ Պարտականությունը լայն իմաստով <<պարտք>> հասկացության հոմանիշն է , բայց նեղ իմաստով վարքագծի պարտադիր տեսակ է , որը սահմանվում է պետության կողմից և նպատակ ունի երաշխավորել այլ մարդկանց իրավունքները ։Օրինակ ՝ այլ մարդկանց կյանքից չզրկելու պարտականությունը երաշխավորում է նրանց կյանքի իրավունքը, այլ մարդկանց ազատության դեմ ոտնձգություն չկատարելու պարտականությունը ՝ նրանց ազատության իրավունքը։Պարտավորությունը այլ մարդկանց , կազմակերպությունների հետ հարաբերություններում որոշակի վարքագծի , ծառայությունների կամավոր ստանձնումն է ։

Քանի որ պարտքն անհրաժեշտություն է , ապա այն ենթակա է կատարման , եթե նույնիսկ չի համընկնում մեր ցանկությունների , քմահաճույքների հետ։ Պարտքը բարոյական բովանդակություն է ստանում այն դեպքում , երբ դրա կատարումը կամավոր է, այլ ոչ արտաքնապես պարտադրված ։ Իրավական նորմերը մարդուն պարտադրում են դրսից։Բարոյական նորմերը հնարավորություն են տալիս մարդուն դրսևորվել որպես ինքնուրույն էակ ։Մենք պարտք ունենք մեր ծնողների , հարազատների , ընկերների , բարեկամների առջև։Մարդը պարտք ունի ոչ միայն ներկայի , այլև անցյալի և ապագայի հանդեպ։Օրինակ ՝ նախնիների հիշատակը

հարգելը մեր պարտքն է ։Կամ ապագա հայրերն ու մայրերը պարտավոր են մտածել իրենց առողջության մասին , որպեսզի նոր սերունդը լինի առողջ ։Մարդը պարտք ունի ոչ միայն ուրիշների , այլև ինքն իր առջև ։Մարդու ձգտումն ինքնակատարելագործման սեփական անձի հանդեպ պարտք է։Ուրիշները մարդու պարտքն են համարում երջանկության հասնելը։

Կանտը բարոյական է համարում միայն այն արարքները , որոնք հիմնվում են պարտքի վրա ։Ըստ Կանտի ՝ յուրաքանչյուր մարդ ունի ինչ-որ բաներ անելու հակումներ, ցանկություններ։Օրինակ ՝ մարդը պարզապես ցանկանում է օգնել աղքատներին , լինել բարի , ապա ըստ Կանտի տեսության , դա դեռևս լիարժեք բարոյականություն չէ։Բարոյական է այն արարքը , երբ մարդը լիարժեք հիմքեր ունի որևէ մեկին չարությամբ վերաբերվելու , բայց այդպես չի վարվում ՝ հիմնվելով բարոյական պարտքի վրա։

# ԽԻՂՃ

Խիղճը մարդու կարողությունն է քննադատորեն դիտարկելու իր արարքները , մտքերը ցանկությունները։Խիղճը մարդու ինքնագնահատականն է , ինքնակառավարումը ։Գերմանացի փիլիսոփա Կանտը խիղճը համարում է մեր մեջ ապրող օրենք , իսկ ֆրանսիացի փիլիսոփա Հոլբախը ՝ մեր ներքին դատավորը։ Ինչպես պարտքը , այնպես էլ խիղճը կախված չէ ուրիշների կարծիքից ։Դրանով է խիղճը տարբերվում մարդու ներքին կարգավորման մեկ այլ ձևից ՝ ամոթից ։Ամոթն ամբողջությամբ հիմնված է ուրիշների կարծիքի վրա ։Այսինքն մարդն ամաչում է , երբ կարծում է , թե ուրիշներն իրեն կմեղադրեն հասարակական նորմերը խաղտելու մեջ ։Ամոթի զգացումն առավել խորն է այն դեպքում , երբ այն մարդիկ շատ կարևոր են իր համար։ Սենեկան ամոթի մասին ասել է . << **Ամոթն արգելում է այն , ինչն արգելված չէ օրենքով**>>։

Խիղճը տարբերվում է ամոթից։ Դեռևս հին աշխարհում փիլիսոփաները խոսել են խղճի մասին ։Հին հույն փիլիսոփա Դեմոկրիտը , առանց << խիղճ >> հասկացությունն օգտագործելու , ասել է. **<<Ոչ մի վատ բան մի՛ խոսիր կամ արա, նույնիսկ եթե միայնակ ես >>** ։ Խրիմյան Հայրիկը խղճի մասին ասել է հետևյալը **.<< Խիղճը հաշվեպահպան ոստիկան է , որն իբրև դատավոր սրտի աթոռի վրա բազմած խայթահարում է միշտ>>։** Խիղճը փոխկապակցված է պարտքի զգացման հետ ։Խիղճը կապված է ոչ թե այլ մարդկանց կարծիքի , այլ պարտքի հետ։ Շատ հաճախ խիղճը համարվում է մարդու երկրորդ ես-ը ։Որոշ բարոյագետների կարծիքով ՝ խիղճը Աստծո ձայնն է։Այս իմաստով խիղճը մարդու պատասխանատվությունն է իր առջև ։ Առօրյայում մենք հաճախ ենք օգտագործում <<մաքուր խիղճ>>, <<հանգիստ խիղճ>> արտահայտությունները։

Բարոյագիտության մեջ կան տարակարծություններ այն հարցի շուրջ , թե արդյոք հնարավոր է << մաքուր խիղճ >> ունենալ։ Շատ բարոյագետներ կարծում են, թե խղճով մարդը միշտ ձգտում է ինքնակատարելագործման և իր առջև նորանոր պահանջներ է դնում։ Նման դեպքերում մարդն ավելի խստապահանջ է դառնում իր նկատմամբ , և նրա խիղճը կարող է տանջել այնպիսի բաների համար , որոնց նկատմամբ ուրիշներն անտարբեր են ։Մարդը միշտ հակված է սխալներ գործելու ։ Հետևաբար , հնարավոր չէ ունենալ մաքուր խիղճ ։ Այն մարդիկ , ովքեր կարծում են , թե իրենց խիղճը մաքուր է , բարոյապես հասուն չեն կամ էլ անհոգի են։

Մեկ այլ տեսակետի համաձայն ՝ մարդը կարող է ունենալ մաքուր խիղճ ։Մաքուր խիղճն այն գիտակցությունն է , որ Դուք ընդհանուր առմամբ կատարում եք Ձեր բարոյակն պարտքը և , ըստ էության , չեք շեղվում բարոյական արժեքներից։

**Բարոյական արժեքները ձևավորվում են Տասը պատվիրանների, Ոսկե կանոնի , ինչպես նաև Աստվածաշնչյան առակների միջոցով**

# 6.ՏԱՍԸ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐԸ

Մարդկային հասարակության բարոյական արժեքների ավելի կատարելագործված համակարգ են ներկայացնում Տասը պատվիրանները , որոնց մեջ արտացոլված և արտահայտված է Աստծու կամքն ու ձգտումը ՝ առաջնորդելու մարդկանց հավատքի ճանապարհով և նրանց միջև հաստատելու արդար ու ազնիվ փոխհարաբերություններ։

Տասը պատվիրաններից առաջին չորսի մեջ բացատրվում են մարդու պարտականությունները և անելիքները Աստծու հանդեպ , իսկ մնացած վեցում ՝ մերձավորների ։Տասը պատվիրանները , որ հայտնի է որպես Հին Կտակարանի օրենք , անհրաժեշտ էին , որպեսզի մարդիկ նախօրոք պատրաստվեին ընդունելու Հիսուս Քրիստոսի պատվիրանները կամ այլ կերպ ասած ՝ Քրիստոսի կատարյալ օրենքը։

1. Ես եմ քո Տեր Աստվածը, ինձանից բացի այլ աստվածներ չպիտի լինեն քեզ համար (Ելից. 20:2-3):

2.Վերևում՝ երկնքում, ներքևում՝ երկրի վրա, և երկրի խորքի ջրերի մեջ եղած որևէ բանի նմանությամբ քեզ կուռքեր չպիտի կերտես (Ելից. 20:4):

3.Քո Տեր Աստծո անունը զուր տեղը չպիտի արտասանես: (Ելից. 20:7):

4.Հիշիր շաբաթ օրը, որպեսզի սուրբ պահես այն: (Ելից. 20:8):

5.Պատվիր քո հորն ու մորը (Ելից. 20:12):

6.Մի սպանիր (Ելից. 20:13):

7.Մի շնանար (Ելից. 20:14):

8.Մի գողանար (Ելից. 20:15):

9.Քո հարևանի դեմ սուտ վկայություն մի տուր (Ելից. 20:16):

10.Ոչ քո մերձավորի տան, ոչ նրա ագարակի վրա աչք մի ունեցիր: (Ելից. 20:17):

# 7.ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԱՌԱԿՆԵՐ

Կրթությունն անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքների պահպանմանն ու նոր սերունդներին փոխանցմանը։ Հայաստանի Հանրապետության մտավոր ներուժի սաղմերն այսօրվա երեխաներն են՝ վաղվա պետության կերտողները։ Այս տեսանկյունից հայ աստվածաշնչյան առակները, որոնք հարազատ են հայ ազգային հոգեբանությանը, առավել արդյունավետ կերպով կարող են ներգործել կրտսեր դպրոցականների հուզաշխարհի վրա։ Այս առումով հայ մանկական գրականության մեջ առանձնահատուկ դեր ունեն առակները, որոնց միջոցով երեխաների մեջ դաստիարակվել են հայրենասիրություն, ազնվություն, աշխատասիրություն, ինչպես նաև ծուլությունը, չարությունը, շահամոլությունը և վախկոտությունը խարազանելու պատրաստակամություն։ Ուսուցողական և դաստիարակչական տեսակետից առակների կրթական արժեքն այսօր էլ բարձր է գնահատվում։ Հենց դա է պատճառը, որ տարրական դպրոցում մեծ տեղ է հատկացվում առակներին։ Անընդհատ մշակվել և մշակվում են առակները երեխաներին մատուցելու նոր մեթոդներ ու մեթոդական հնարներ, որոնց հիմնական խնդիրը առակի հումորն ու այլաբանական միտքը երեխաների գիտակցությանը

հասցնելն է:
Առակի ուսուցումն առանձնահատուկ տեղ ու դեր ունի երեխաների կյանքում, քանի որ անգնահատելի է առակի թե՛ ուսուցողական և թե՛ դաստիարակչական նշանակությունը: Առակներն այլաբանորեն , ոչ ուղղակի կերպով աշակերտներին բարոյական խրատ են ուղղում՝ դաստիարակելով խոհեմություն, ազնվություն և արդարություն, աշխատասիրություն, համեստություն, սակավապետություն:
Առակների միջոցով է, որ դպրոցականը ընկալում է մարդու բարձրարժեքությունը , միասնականության ուժը:
Առակների ուսուցողական արժեքն անվիճելի է, քանի որ այն , ինչ ուզում ենք հասկանալի ու իրագործելի դարձնել երեխայի համար, կարող ենք իրականացնել հենց առակում առկա բարոյախոսության միջոցով: Երեխան հասկանում է, որ առակի հերոս կենդանիները, բնության երևույթները կերպարանափոխված մարդիկ են: Շատ ավելի դյուրըմբռնելի ու պարզ է դառնում առակի հիմնական մտքի վերհանումը աշակերտների կողմից, եթե աշխատանքը զուգորդվում է առակի թեմային վերաբերող առածների, ասացվածքների կիրառմամբ:
Առակների դասավանդումը երբեք չի կորցնում իր բուն նպատակը՝ դաստիարակել բարոյական բարձր արժեքային համակարգ ունեցող սերունդ, երեխայի մոտ վերացնել բնավորության վատ գծերն ու թերությունները, ընդլայնել աշխարհաճանաչողական գիտելիքները:
Աստվածաշնչյան առակների միջոցով երեխաների մոտ ձևավորում է բարոյական արժեքներ:

Օրինակ՝

# Երկու սերմի պատմությունը

Մի անգամ քամին ծառի երկու միանման սերմ է քշում տափաստան: Երկուսն էլ սկսում են աճել: Բայց որոշ ժամանակ անց մի ծառը փարթամանում է ու

այնպիսի գեղեցիկ տեսք է ստանում, որ նույնիսկ շատ հեռվից սկսում է գրավել մարդկանց: Անցորդները սկսում են հաճախ նրա տակ կանգ առնել, հանգստանալ: Ու ծառը սկսում է մյուս՝ ավելի անշուք ծառին հեգնել:
— Տեսնում ես՝ ինչպիսի գեղեցիկն եմ ես, – ասում է գեղեցիկ ծառը, – դու երևի չգիտես, թե ինչպես ճյուղերդ ու տերևներդ շատացնել: Եթե ուզես, ես քեզ կսովորեցնեմ ինչպես գեղեցիկ աճել: Որոշ ժամանակ անց ուժեղ քամի է բարձրանում և գեղեցիկ ծառը, որը ինքնահմայքով արբած էր ապրում, շրջվում ու հենվում է մյուս՝ ոչ անշուք ծառին: Ու ասում է նրան.- Ինչո՞ւ դու, որ այդքան անշուք ու տգեղ էիր, մնացիր կանգնած, իսկ ես, որ այդքան օգուտ էի տալիս մարդկանց, շրջվեցի:
— Որովհետև, քանի դեռ դու զբաղված էիր քո ճյուղերն ու տերևները շատացնելով ու ինքդ քեզանով հիանալով, ես իմ արմատներն էի խորացնում՝ պատրաստ լինելով քամուն, – պատասխանում է մյուս ծառը:

***Այս առակը դաստիարակում է երեխաների մոտ խոհեմություն և պարսավում է պարծենկոտությունը:***

# Առակ բարի սամարացու մասին



Մի մարդ Երուսաղեմից գնում էր Երիքով և ավազակների ձեռքն ընկավ, որոնք մերկացրին նրան, ծեծեցին ու կիսամեռ թողնելով՝ հեռացան։ Այնպես պատահեց, որ մի քահանա իջնում էր այդ ճանապարհով, բայց երբ տեսավ նրան, ճանապարհի մյուս կողմով անցավ-գնաց։ Այդպես էլ մի ղևտացի, երբ հասավ այնտեղ ու տեսավ նրան, ճանապարհի մյուս կողմով անցավ-գնաց։ Բայց մի սամարացի, որ անցնում էր այդ ճանապարհով, տեսավ նրան ու կարեկցանքով լցվեց, մոտեցավ ու կապեց նրա վերքերը՝ դրանց վրա ձեթ ու գինի լցնելով։ Ապա նրան դրեց իր էշի վրա, բերեց մի իջևանատուն և հոգ տարավ նրա մասին։ Հաջորդ օրը երկու դինար հանեց, տվեց իջևանատիրոջն ու ասաց. «Հոգ տար նրա մասին, իսկ եթե սրանից ավել ծախսես, կվճարեմ քեզ, երբ վերադառնամ»։ Ըստ քեզ՝ այս երեքից ո՞ր մեկը մերձավոր եղավ ավազակների ձեռքն ընկած մարդու համար։ Օրենսգետը պատասխանեց. «Նա, ով ողորմածաբար վարվեց նրա հետ»։ Հիսուսն ասաց նրան. «Գնա և դու էլ այդպես արա»։

**Առակի մեկնաբանությունը հետևյալն է.**

Այս առակի միջոցով Հիսուսը սովորեցնում է , որ անհրաժեշտ է բարի և ուշադիր լինել բոլորի նկատմամբ , օգնել նեղության մեջ գտնվողներին , սիրել և հարգել մարդկանց։

Առակի նպատակն է պատասխանել այն հարցին , թե ով է ճշմարիտ բարեկամը ։ Ճանապարհորդը տաճարի պաշտոնյաներին միշտ համարել է իրեն բարեկամ ։Բայց նրանք անտեսեցին ծանր վիճակում գտնվող մարդուն։Դրան հակառակ սամարացին, որն օտարական էր , կանգ առավ և օգնեց նրան։Ուրեմն վիրավոր ճանապարհորդի իսկական ընկերը , բարեկամը ոչ թե նրա ազգակից հոգևորականն ու պաշտոնյան էին, այլ օտար սամարացին։

Սիրել ընկերոջը՝ չի նշանակում սիրել միայն հարազատին կամ ծանոթին, ոչ էլ միայն հաճելի խոսքեր ասել մարդկանց։Պետք է սիրել ոչ միայն խոսքով ։Անհրաժեշտ է սիրել նաև գործով։

***Մի ունեցիր հարյուր դահեկան, այլ ունեցիր հարյուր բարեկամ։ Հավատարիմ բարեկամ , ընկեր ունենալը մեծ երջանկություն է։***

# Եզրակացություն

Բարոյական արժեքները ձևավորվում են ոչ միայն ձեռք բերված գիտելիքների և ինֆորմացիայի, այլև սեփական կենսափորձի հիման վրա։

Բարոյական արժեքները խիստ կապված են մարդու արժեհամակարգի հետ։ Երբ մարդիկ խոսում են արժեքների մասին , շատ հաճախ նկատի են ունենում բարոյական արժեքները , որոնք վերաբերվում են մարդկանց ճիշտ կամ սխալ , բարի կամ չար լինելուն ։

Հասարակության մեջ ապրելով ՝ մարդիկ ձևավորում են համակեցության ու շփման իրենց պատկերացումները , որոնք հիմնվում են բարու և չարի , արդարի և անարդարի ,ճշմարիտի և սխալի վրա ։Այդ պատկերացումները կարող են բխել տարբեր աղբյուրներից ՝ կրոնից, ավանդույթներից , սովորույթներից , հեքիաթներից , առասպելներից , հարգանք ու հեղինակություն վայելող անձանց կարծիքներից։

Պատկերացումներն ու համոզմունքները , ժամանակի ընթացքում սերնդեսերունդ փոխանցվելով , բյուրեղանում են և տվյալ հասարակությունում ապրող մարդկանց համար դառնում բարոյականության ուղենիշներ։ Դրանց հիման վրա էլ մարդիկ իրենց համար ստեղծում են համակեցության կանոններ ՝ արժեքներ։

Բարոյական արժեքներն ունեն համընդհանուր կատարման համար պարտադիր բնույթ և տարածվում են բոլոր մարդկանց վրա։

Բարոյականությունը սերտորեն կապված է մարդու բանական լինելու հանգամանքի հետ , որովհետև բանականությունն է մարդուն կողմնորոշում դեպի բարձրագույն բարիքը , ձևավորում արժեքային որոշակի համակարգ և տալիս ազատ , գիտակցված ընտրության հնարավորություն։

Բարոյականության պատկերացումները քարացած չեն ։Ժամանակի ընթացքում ՝ սերունդների հերթափոխում , դրանք ենթարկվում են փոփոխության , որը կարող է պայմանավորված լինել տարբեր գործոններով . օրինակ ՝ տեխնոլոգիաների զարգացում , կրոնական հայացքներ, կրթության որակ , մշակույթ , ավանդույթներ և այլն։ Բարոյական արժեքները կարևոր են երեխաների դաստիարակության և կրթության գործում, քանի որ դրանք օգնում են նրանց որոշելու, թե կյանքում ինչն է կարևոր: Մյուս կողմից, դրանք օգնում են երեխաներին հասարակության մեջ ապրել արժանապատիվ և ճիշտ:

Բարոյական արժեքների զարգացումը երեխաների կյանքում կարևոր գործընթաց է, որը պետք է սկսել վաղ մանկությունից:

Բարոյական արժեքները հնարավորություն են տալիս երեխաներին գնահատելու տարբեր իրավիճակներ , մարդկանց արարքներ և գործողություններ ։Եվ այդ գնահատումից երեխան կյանքում կարողանում է ճիշտ որոշել թե ինչն է լավ և ինչը՝ վատ , թե ինչն է ցանկալի և ինչը ՝ անցանկալի:

Բարոյական արժեքները չափանիշներ են, որոնք օգնում են երեխային տարբերակելու ճիշտը սխալից, լավը վատից:

Բարոյական արժեքները օգնում են երեխաներին առօրյա կյանքում ազնիվ և արդար որոշումներ կայացնելու և բնավորության դրական հատկություններ զարգացնելու :

# Գրականության ցանկ

1.Արտուրո Կարդոնա Սանչես (2000): Արժեքների ձևավորում. Տեսություն, մտորումներ և պատասխաններ: Խմբագրական Grijalbo, Մեքսիկա.

2.Գրեմ Հայդոն (1997): Արժեքների ուսուցում. Նոր մոտեցում: Հրատարակություններ՝ Մորատա, Իսպանիա:

3.Էսկոբար, Արրեդոնդո և Ալբարան (2014): Էթիկա և արժեքներ: Grupo Խմբագրական Patria. Մեքսիկա

4.Արժեք (աքսիոլոգիա): Վերականգնված է es.wikipedia.org կայքից: